

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

18.05.2013



Համայնքային առաջնահերթ հիմնախնդիրների լուծման հրատապ ծրագրերի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքին տեղում ծանոթանալու նպատակով մարզի մի շարք համայնքներ է այցելել Կոտայքի մարզպետ Կ. Շահգալոյանը:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և համապատասխան համայնքների ղեկավարների ուղեկցությամբ մարզպետն այցելել է Արզական համայնք, որտեղ արդեն փորձարկվել էր նորակառույց ռոռոգման ջրագիծը և պատրաստ էր շահագործման:

Այնուհետև Կոտայքի մարզպետն այցելել է Ալավիարս համայնք, որտեղ իրականացվում են ռոռոգման ջրագծի շինարարական աշխատանքներ: Ծանոթանալով աշխատանքների կատարման ընթացքին՝ Կոտայքի մարզպետը գրուցել է շինարարական, ինչպես նաև վերահսկողություն իրականացնող կազմակերպությունների պատասխանատուների հետ՝ տվել է համապատասխան հանձնարարականներ:

Այցելության շրջանակներում մարզպետը ծանոթացել է Չարենցավանի 4-րդ և 5-րդ հիմնական դպրոցներում իրականացվող վերանորոգման ու բարեկարգման աշխատանքների ընթացքին, գրուցել է դպրոցների տնօրենների և շինարարների հետ, ինչպես նաև տվել է համապատասխան հանձնարարականներ, իսկ 6-րդ դպրոցում քննարկել է հիմնանորոգված լողավազանի շահագործման, ինչպես նաև աշակերտներին ջրային մարզաձևեր ուսուցանելու համար անհրաժեշտ մասնագետների ներգրավման պայմանների մասին:

Այցելության վերջում մարզպետը ծանոթացել է Չարենցավանի Կարեն Դեմիրճյանի անվան հրապարակում ընթացող Եղիշե Չարենցի հուշարձանի կառուցման աշխատանքներին, գրուցել է քանդակագործի և ճարտարապետի հետ, իսկ Չարենցավանի քաղաքապետ Հ. Շահգալոյանի և քաղաքապետարանի աշխատակիցների հետ քննարկել է հուշարձանի հանդիսավոր բացման և հարակից տարածքի բարեկարգման միջոցառումներին վերաբերող հարցեր: